կոց հետ միանալով, ընդհանրապէս ի տըգիտութենէ ի գիտութիւն ազգի դարձը կը կազմեն։

Գիտութեան ճանապարհը մտնելու, յառաջադիմութեան ասպարէզը ազգի ընդհանրութեան հետ միասին չափելու՝ ազգի ընդհանուրէն օրինակ պէտք է առնուլ։—Ամէն ազգ իր լուսաւորութեան հնարքը իր մէջ պիտի որոնէ։

ԱՐՍ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

# ԱԶԳԱՅԻՆ

## ԵՐԿՈՒ ԱՐԺԵՏՈՄՍ.

Նոր-Նախիջևանցի Մեծ. Պ. Գասպար Մարկոսեան Պօպովեան՝ 1864 և 66 թուականաց Ռուսական ներքին փոխառութեան վիճակարկութեան արժետոմսերէն՝ երկու հատ նուիրեց Մայր Աթոռոյս նորակառոյց Ճեմարանին։

Առաջնոյն թիւն է 40, և սեր. 4737, և երկրորդինն՝ թ. 31, և սեր. 1993։

Յիշեալ բարեպաշտ անձի նպատակը և եռանդը գովելով՝ հրապարակաւ շնորհակալութիւն կըմատուցանեմք նմին։

## ԳՈՐԳԵՐ.

Արցախոյ վիճակին Առաջնորդ Գեր. Սարգիս Ս. Արքեպիսկոպոս Ջ. Ջալալեանց՝ իւր ջանիւք ձեռք բերած ի պէտս մասանց նորաշէն խորանաց Մայր Աթոռոյս՝ երեքտասան հատ մեծ և փոքր գորգեր առաքեց այսր ի Ս. Էջմիածին, որոց համար խորին շնորհակալութիւն Նորին Սրբազնութեան։

Այս առթիւ կարևոր կհամարիմք ծանուցանել, զի ինչպէս Գեր. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Վեհապետեանց՝ նոյնպէս վերոյիշեալ Սարգիս Ս. Արքեպիսկոպոս՝ աստի ի Մայր Աթոռոյս առժամանակեայ կերպիւ տուած Եպիսկոպոսական զգեստները վերադարձուցին այսր՝ ըստ տնօրէնութեան Վեհ. Հայրապետին՝ նորաշէն պահարանաց հնութեանց թանգարանի մէջ որոշեալ բաժնում ի տես այցելուաց զետեղելոյ համար, որք հետ զհետէ խնամով պահուելով՝ երևելի հընութեանց ի կարգ կդասուին. իսկ եթէ անխնայ գործածուին՝ անշուշտ չեմք կարող Մայր Տաճարը նոյնպիսեօք զարդարեալ և ճոխացեալ տեսնել, և եղածները գործածելով և հինցնելով՝ չգիտեմք ով պիտի լեցնէ նոցա տեղերը, մինչդեռ եթէ ամենայն եպիսկոպոսունք՝ ըստ Ազգային-Եկեղ. հին սովորութեան՝ որք կարողութիւն ունենալով՝ ինքեանց սեպհական եպիսկոպոսական զգեստներ պատրաստեն, յայտնի բան է՝ զի Մայր տաճարին ճոխութիւնը կյաւելուն և ինքեանց յիշատակ կը թողուն։

## ԵՐԵՔ ՀԱՐԻՒՐ ՌՈՒԲԼԻ.

Ախալքալաքցի Մեծ. Գրիգոր Տէր Կիրակոսեան երեք հարիւր ռուբլի նուիրեց ի նպաստ պիտոյից Նորակառոյց Ճեմարանի Մայր Աթոռոյս։

Շնորհակալութիւն կնուիրեմք յիշեալ բարեպաշտ անձին՝ գովելով իւր բարի նպատակը։

## ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Գեր. Մամբրէ նորապսակ Եպիսկոպոս Մամիկոնեանց՝ Առաջնորդն Բաղիշոյ՝ ի 21-ն ամսոյս մեկնեցաւ ի Մայր Աթոռոյս։

## ՓՈԽ.—ԹԵՄԱԿԱԼ ԵՐԵՒԱՆԱՅ.

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի՝ Գեր. Եղիազար Ս. Արքեպիսկոպոս՝ ի տեղի Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոսի՝ Երեւանայ վիճակին փոխ.— Թեմակալ կարգեցաւ։

## ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻԿՈՍ ՊՈՒՐՊՈՆԵԱՆ.

Ի 24ն ամսոյս՝ Թագաւորազուն Ս. Իշխան Բարձրապ. Հենրիկոս Պուրպոնեան՝ կոմս Պարտուոյ՝ եկն ի տեսութիւն Վեհ. Հայրապետի եւ յայցելութիւն Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի։

Նորին Ս. Օծութիւնն արժանաւոր մեծարանօք հիւրասիրեց, եւ ի պատիւ նորին բարձրութեան մի ճաշ տուաւ, յորում սեղանակից եղան Երեւանայ նահանգապետ Վսեմ. Կարմալին եւ երկու Եպիսկոպոսունք, եւ Թագաւորազուն իշխանին ուղեկիցներ Վսեմ. Մարգիզ Մալասպինա եւ Վսեմ. Կոմս Մօնպէյլ, եւ այլ քաղաքական պաշտօնակալք տեղւոյս։

Յիշեալ Իշխանն՝ նախ քան զճաշն՝ մտաւ ի Ս. Տաճարն յերկրպագութիւն եւ այցելեց Մայր Աթոռոյս արժանաւոր վայրերուն, եւ երեկոյեան մօտ՝ վերադարձաւ յԵրեւան։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շ–ր––ն–կ––թ–ն.)

### ՅԱՐՄԱՒԻՐ.

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Յարութիւն Կիրէնեանց | 2 | |
| Պօղոս Մուրատեանց | 2 | |
| Յովհաննէս Մուրատեանց | 1 | |
| Խաչիկ Եղուբեանց | 2 | |
| Եսայի Մուրատեանց | 5 | |
| Ղափլան Ղափլեանց | 1 | |
| Մինաս Տէրտէրենց | | 50 |
| Մարտիրոս Փարիզեանց | 1 | |
| Գասպարեան Եաղուբեանց | 1 | |
| Ղուկի Առաքելեանց | 2 | |
| Աւետիք Յովհաննէսեան | 2 | |
| Վարդան Փանովեանց | 1 | |
| Կարապետ Շիրինեանց | | 50 |
| Գէորգ Մուրատեանց | 1 | |
| Մելքոն Գոմբասեանց | 1 | |
| Թովմաս Ջեկէսեանց | 1 | |
| Պետրոս Յովհաննէսեանց | 1 | |
| Տիրացու Խաչատուր Տըմբովեանց | 1 | |
| Մարգար Ճաղուբեանց | | 50 |
| Գրիգոր Շիրինեանց | 2 | |
| Աղէքսանդր Բաղերեսեանց | 1 | |
| Սարգիս Փանոսեանց | 2 | |
| Գրիգոր Ճաղուպեանց | | 50 |
| Մինաս Մուրատեանց | 5 | |
| Աւետիք Թապէլեանց | | 50 |
| Կարապետ Պշէկեոսեանց | | 50 |
| Խաչատուր Օքսենտինեանց | 1 | |
| Միքայէլ Խաչերեսեանց | 1 | |
| Բաղդասար Այվազեանց | 1 | |
| Յարութիւն Օքսենտեանց | 1 | |
| Յարութիւն Ճաղուպեանց | 5 | |
| Գրիգոր Գասպարեանց | | 50 |
| Կարապետ Շարապեանց | | 50 |
| Նիկողայոս Տօմպալեանց | 1 | |
| Գասպար Օքսէնտեանց | | 50 |
| Այրի կին Գոհար Այգենուհի | 1 | |
| Սարգիս Այվազեանց | 1 | |
| Գէորգ Աքսենտեանց | | 50 |
| Աւետիք Աքսենտեանց | | 50 |